

Աշխարհիս մի՛ հաւատար, զօրն ի բուն զեմ սուտ կը խօսի :
Զինչ որ խոտտանայ մարդուն՝ չի պահէ զիր խօսքն ի տեղի :

Շատոց խոտտանայ հանգիստ, ու պահէ զօրն յերերմբնի :
Շատոց մեծութիւն առաջ՝ պահէ աղքատ 'ւ անօթի :

Խարէ թէ ուրախ պահեմ, ու առնեմ զօրերդ ի բարի,
ի մէջն ի ծովուն տանի ու պահէ ի տարտարոսի :

Աւուրք մի վերայ անցնի, ու մահու օրն հասանի :
Բարեւուն դատարկ հանէ եւ առնէ ողորմ ու լալի :

Աւա՛ղ, զայն աղւոր մանկախն որ դարձան ի հող 'ւ ի փոշի :
Իւրեանց ժամանակն անցաւ զերթ երազ մութն գիշերի :

Երբ զայս գիտես գերի, որ քու սէրդ ի սուգ տի փոխի,
Ջաշխարհս դու մի՛ սիրեր առաւել քան զկարն աւելի :

Մալի հասրաթ մի՛ լինիր, մեծութիւն քեզ չի պիտի :
Ունիս կերակուք հանգերձ՝ աւելին քեզ ցաւ կուլինի :

Ա՛յ, ողորմելի Նաղաշ, քանք արա՛ ու գործէ բարին :
Զքու խրատն դու լըսէ՛ որ այլոց ի գործ անցանի :

Գիտէիր թէ լողորդ էիր՝ նա՛յ մեղաց գետն կու տանի :
Ի հոգ աշխարհիս դատիս, շահ չունիս քան զինն աւելի :

ՆԱԳԱՇ



ԵՐԿՈՒ ՈԳԻ

— 0 —

ՔԵՐՈՒԱՍ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

«Ես սիրում եմ նրան, ով իր բարութիւնը
իր խաչ ու ճակատագիրն է դարձնում :
Այդ փրկող նա կը ցանկանայ իր բարութեան
չափը ապրել եւ չ'ապրել :

ՖԻՆԻՑՅԷ

Ա.

Երկու բնկեր էին, երկու ուժ էին :
Երկու սրտեր էին նոքա, որոնք միացած,
բայց բաժան էին. մօտ ու շատ հեռու՝ միմ-
եանցից :

Երկու երկրային ուղիներ էին, որոնք ու-
նէին սիրտ եւ ուղեղ, եւ որոնց սիրտն եւ
ուղեղը շատ հաշտ ու շատ օտար էին միմ-
եանցից :

Եւ երկուքն էլ զոգոգոուն քայլերով մտան
գիտութեան տաճարը. եւ երկուքն էլ երկըր-
պագեցին գիտութեան Կուռքին :

Մօ՛տ, շատ մօտ էին միմեանց երկու սրտերը :
մի էր նոցա հոգին, երբ գիտութեան ուժի ա-
ռաջ դեռ չէին զգացել իրենց ոչնչութիւնը : . .

Բացուեց կախարդական աշխարհի վարա-
գօյրը :

«Տիեզերք» էր կոչուում այն հսկայ դրաման
որը իւրաքանչիւր օր պարզում էին երկու սր-
տերին՝ Կեանքի մեծ խորհուրդները : Եւ ատե-
ցին նոքա տիեզերքը :

Անծա՛յր ու անհո՛ւն, չոր անապա՛տ էր այդ
տարածութիւնը : Մարոյցն ու բոցը շղթայել
ու շանթել էր հողագունաբը :

Ու մեռնակ էին. անմեղ թիթեռ էին նոքա
վիժող լափող բոցերի մէջ :

կասկածի վիճալը չոքեց կրթքերին՝ գիտելին նոքա ու չգիտելին՝ Մեծ, շատ մեծ ուժ քաշում էր նոցա դէպ ի վի՛ր ու վե՛ր... բարձրանում էին անձայր ու անհո՛ւն։

Մուժ էր գեռ անվերջ խորշեր։ Մշուշով պատած էր դեռ ա՛յն ատարկաներ, որոնց տեսել էին երկու սրտերը։ Եւ յուսահատուեց նոցանայի մէկը, կորցրեց իր նեցուկը... նա մի ճիշտ արձակելով գլորուեց լիսնային բարձրութիւնից։

Վերցուեց վարագոյրը։

Երկրի ու կեանքի վիթխարի դրաման աչքի առաջն էր... տխու՛ր էր նա, Այստեղ մշուշը չէր սեղմել տեսարանները, նոցա չղթայել էր հզօր արեւի արիւնգոյն սլաքները, ո՛րնք, որպէս նետեր, շանթում շամփրում էին անհեղ տիեզերքը։

* * *

Արտասուեաց ովկիանի ափին էր կանգնած։ Սեւ սեւ ալիքներ, որպէս վիշապ, մօտենում էին կատաղած, բոցոտ ու ժահլ բոտ։

Չարսեց ոգին, միայն արտասուեց։

Գազգած, փրփրոտ, հրոտ մեծ վիշապը, քարնեց ոգուն տարաւ շատ խո՛ր, խո՛ր յասակ։ Եւ նա տեսաւ արեւան ծովեր, բերբ զոհեր։ Դողաւ նա գուրա թուա, որոտաց։

«Ես արե՛ւ եմ, արեւի նե՛տ։ Ես մարգարէ՛ եւ բայասան եմ վերքերի»։ Ի՞նչաւ սարից, մի վիշտ առաւ, մի պոտ արցունք, մի սրտ աբիւն, մի խոց առաւ, մի խաչ չի՛նեց կախեց կրծքից... եւ նա գրկեց տիեզերքը, ու ծպտաց։

Բ .

Մովրի անցաւ, լեռներ անցաւ՝ տրտում տխուր, միայնակ, եւ ամէն տեղ վի՛շտ ու թալիւն։

Մի սարի դազաթից նա տեսաւ մի դաշտ, պերճ ու կանաչ հագուստի տեղ դաշտը կրում էր չոր մացառներ, լեռի ժայռեր։ Մի մեծ քաղաք տարածւել էր անապատում։ Սուր աւտամնաւոր հսկայ պարիսպներ շղթայել էին սզտտ աւերակը — աւերակ էր դա՛ դաժան ու մեռած։ Մի մեծ բանակ շրջապատել էր նորան, եւ նոքա, որպէս անգութ որսորդներ, պաշարել էին եղնիկի որջը . ոգին տեսաւ այդ, քայլից դէպ ի բանակը եւ խօսեց նրանց. «Ի՛նչ էք ուղու՛մ մարդկանցի՞ք՝ դուք մա՛ որդիկ դայիբ էլ չէ՛ք, թողէ՛ք զոցա, թողէ՛ք նոցա որ ապրին։ — Ճամբարիս ես, ո՛վ մարգարէ՛. գնա՛ պատգամ ասա՛՝ նոցա՛ որ մահը հաշտ ենք, եղբայր ենք, ասին՝ որմանք զոր ծպտելով։ Խնդաց ոգին։ Գնաց, մտաւ քաղաքը, դարմացաւ։

Գերեմիա՛ն էր, լայն գերեմիան։

Դիակները կոտոր տեսաւ, կամխքներ տեսաւ։ Ենովայի չեղի տանաբը Մողորքի առն էր դառել զոհ ուղում... օհ, ո՛րքան զոհ։

Եւ խուլ վիշտ էր եւ խոր խոց էր տիեզերքը։

Լաքի՛ց ողին, խնդա՛ց ոգին, մի երգ երգեց, երգն էր ազատ ու հնչուէն։

Լսեց նորաւ մարդկանց խուժանը . մարդարէ՛ էր, անթի՛ծ էր։

... Եւ մարգարէն դազանների բանակը խուժեց քաղաքը...։

Անապատը ծարաւի էր . արին՝ արցունքը փրփրալով յազուրդ հուռեց ծարաւ երկրին։ Սարսեց ոգին. կայծեր, անէծք՝ մանուկ, մաքուր շրթուքներից ցայտեցին։

«Խոտամնազանց դազաննե՛ր, թող կայծակը ձեզ լափէ՛. արեւն-արցունք՝ բոցի՛ր դառած, ձեզ կլանէ ու լափէ։» Միծաղեցին երջանիկները — միամիտ էր մարգարէն — բանտարկեցին նրան։

Թշուառութեան վիճ էր բանտը։

Ժանգոտ ճիւղաղ ժանտախտը այնտեղ բուռն էր գրել։ Սոսկալի էր նրա համբոյրը տանջուած գերիներին — սուր մանցաղ հնձում էր արտը, եւ կուտակո՛ւմ, կուտակո՛ւմ։

Մի արտ էր նա, մի հսկա՛յ արտ։

Եւ մարգարէն դարձաւ նրանց, երգեց մի երգ. «Ես բժիշկ չե՛մ, ես արե՛ւ եմ եւ արեւի նետն եմ միայն . բացէ՛ք յայտնեցէք ձեր սիրտը ինձ — արտի գրկում, նետի նշան դուք եղէք. սրտի տա՛նջալնքը, նետի սլաքը — մահն է կեանքը»։

Բանտի պատի մի մուժ խորշից արեւի նետերն էր ներս ցցւում։ Եւ նե՛տ էին, եւ յոյս էին, եւ մա՛հ էին — կեանք էին։

Գ .

Մի երկիր էր — դրախտ եւ դժոխք։

Երջանիկ եւ ուրախ էին այնտեղ մարդիկ . դժբաղդ ու տրտում էին այնտեղ մարդիկ։

Բրքիջն, արցունքը ընկեր էին, մի էին. բայց արցունքը հեղեղում էր քրքիջը, եւ սորա առողջ, կոհակածեւ եղեւջներն ու խաղերը խեղդում էին պղտոր հեղեղի գրկում։

Մի մեծ գետ էր հոսում այդ երկրի միջից . գետը երգ էր, երգն էր հառաչ ու քրքիջ։ Նրա մի ափում, պայծա կանաչները, պայտանների մէջ պարում էին երջանիկները . միւսումը սեւ ծխով քողաւորում, հսկայ շէնքերի թիււերի տակ ընկել էին մռայլ մարդկացի որջերը։ Եւ երկուքն էլ ապրում էին...

Անցաւ մարգարէն երջանիկների ափը եւ երգեց։

«Նել՛ք, նայցե՛ք երջանիկնե՛ր, ձեք արեւնոտ գահերից, թշուառութիւն, վիշտ ու սանջանքը հեղեղում են ձեք քրքիջը։ Տիեզերքը՝ խոցուած խամբա՛ծ, հառաչում է ու շայում։ Նա հրաւրու՛ւ, նա վիշա՛պ է. կը կլանէ ձեք կեանքը . սիրեցէ՛ք միմեանց, հաւասար էք, եղբայրե՛ք...

Լսեց նորաւ ամբոխը, լկտի հոհոց մի մտաւ գուռն՝ յառաջ գալով, որպէս պետ . խորխոտ կանգնեց ու գուռաց։

— Հեռով, դու սո՛ւտ մարդարե՛կ, դո՛ւ ժանտ արևոտ ես ու ժա՛նքը ես—չենք վախճանում մենք արհաճիրքի տարերքիք։ մենք ապրում ենք, երջանիկ ենք. գնա՛ հեռու, մի խանգարիլ մեր քունը. գնա՛ սիրելի դու ուրուական — մարմին չունիս — «ես» չունիս :

... Եւ արեւնից երկիւղ կրող սիրոյ ոգին, լիտան զուխը բարձրացաւ ու փչեց փողը...

Բամբեց ամպրոպը, թնդաց երկիրը...
Եւ տարբեր հատան ու ճիւղ տիրեց երկրին. եւ պահ մի եւս — եւ ամէն ինչ լո՛ւս ու մոլո՛ր։ Եւ մոլո՛ր էր, թանձր վի՛շտ էր տեղերքը...

Երկիր աշխարհ նա թափառեց, որպէս սիրոյ ուրուական. աշխարհ երկիր սեւ սուգ էր հագել. սուգը սիրոյ — մեծ սիրոյ։
Տիեզերքի մոռյլ ճակատը խոր խորշում ներս էին ցանցել. մի խորշումը հազար վիշտ էր պարտերել։

Սիրոյ ոգին տեսաւ աշխարհ ուր բռնու-թիւնն էր թաշաւորում՝ արխն-թարախ ճաւհի՛ք վրայ։

Գնաց յառաջ։
Այնտեղ «ե՛ս»-ի, անեղբ «ե՛ս»-ի, անսանական «ե՛ս»-ի, սիրող «ես»-ի պարը նա տեսաւ։

Տեսաւ անդունդ՝ խոր գերեղման մեծ ու տիրող ազդերի. հին անդունդը այժմ երկիր էր, հողն էր. հողն աճեւնն էր ազդերի։

Կնաց յառաջ։
Այնտեղ որտեղ սիրոյ ուժը ընկճուել, խեղդուել, ոսկի հորթի պաղ ու փայլուն գահի տակ. այնտե՛ղ, որտեղ մաքի մարգիկ թարախարհւն էր խառնած, սեւ վիշտ դարձած, թաւուկ մաշուած վարձկան էին, երգիչ էին ոսկի հորթի խնդրում։

Մութ ու մայլ ճախճներում տեսաւ ուրիշ մի ամբոխ՝ թալուկ, արտում, կեղծ հրճուանքով, ընկնում էին ոսկի հորթի տոփա գիրկը։
Սպրիլ պէտք էր...

Տեսաւ անա ոսկի կուռքի շուրջը պատել է գոյն գոյն, անմայր մի ամբոխ. ոստում էին, գպտում էին, դառն լալիս. ոսկի հորթը խըլտ, դուռ, գորտ, գարուռիլի քըջում էր եւ տարերքի սոսկալի ողբը՝ միացած, մեծ մա-հերգն էր։

Դա էր կեանքի կատաղի մարար։
Եւ տիեզերքը թարախով լի մեծ ճահճ էր ու մեծ վէրք։

Լացեց ոգին։
Եւ տանջվում էր անեղբութեան հսկայ վիշտով. լալիս էր նա քնութեան անհուն սգով։

Եւ փայտեց նա։
Բարութիւնը չէր նրա մենտորը։ Նրա «ես»-ը հսկայ էր, ինչպէս հսկայ տեղերքը։

Մեծ «ես»-ը տարաւ սիրոյ ոգուն անեղբութեան խոցերի շաւիղի միջից... Եւ բժշկուեց նա։

Մի պուտարիւն, մի պուտ արցունք, խոց ու վիշտ էր նրա խաչը. լուծեց նրան թշուառութեան անձայն ծովում... հեշտանք չգաց։

Ոգին փայտեց ու ծիծաղեց որպէս մահուկ... եւ նա սիրել ցանկացաւ։

Սիրոյ հրէշտակը՝ քնքշուշ թեւով, վարդ չրթուեցով, սէր բերեց. սիրոյ աստուածը տա-րաւ նրան ամպրոկը բարձր եւ սիրեց։

... Եւ նա մեռաւ, տանջուած, յոգնած — փայտալով։

ԵՐԿՐՈՐԴ

Վեցե՛ք, ես կայծակի փայլը եւ սեւ ամպրոկը թափող ծառի կոթիլն եւ, իսկ կայծակը կոչում է գեր-մարդ։

ՅՐ. ՆԻՑՁԷ

Ա.

Դա՛ման, մայլ, զոռ ամպերը որոնող ու դուն զէպ ի վեր ու վեր էին տա-նում։ Շնչող, շաչող փոթորիկը, նեցուկ, թեւ էր տիեզերքի տենդուտ ոգուն. եւ նա տոկուն ու անխուժ պանում էր...

Հասաւ մի տեղ, որտեղ խիտ մշուշը կուտակուել, քարացել էր. փայտն երեսին, թաւուկ ու խոնջ, մի մեծ չունչ առաւ եւ շուրջը նայեց։

Մեծ-մեծակ է՛ր, անյայտ ու անպարագիծ տարածութեան մէջ։

Եւ մայլուելով, հայեացքը ցած թողեց։
Սկսեց ընկերը. նա այնտեղ, հազիւ. նշմա-րուող փոքր երկրի գիրկն էր։

Եւ այդ կածանը խաւար ու անվերջ երեւ-ցաւ որոնող ոգուն։ Լսեց նա որպէս անդերկը-րային խուլ որոտումներ, գերեզմանային ընդ-հատուող ձայներ. նրանք, մերթ ուժեղ ու դոյն, մերթ մեռելային յուսահատական, հնչում, ցայտում էին անհունութեան անտեսելի վի-նում։ Որոնող ոգին՝ միայնակ ու թույլ՝ զար-հուրեցեալ այս վիթխարի ոչնչութեան վրայ, խաւարի անեղբութեան մէջ... սկսվում էր լուծուել խառցած մշուշը, եւ ոգին զգաց որ խորտակվում է։

Յանկարծ նա լսեց, որպէս փոթորիկ հեռաւոր ալիք, իր ընկեր ոգու երջանիկ ու դառն երգն ու արտունջը։ Որոնող ոգու սիրտը, հան-գած ու մեռած, այժմ ըտրքովում, զուրս թռչել ուղարկ էր, երկրի գիրկն ընկնել, զգալ վիշտ ու հրճուանք։

Շա՛տ էր բարձրացել...

Ու ձգտող ոգին, կաթեա դեռ խօլ անուր-ջում, յուժմ էր ընկեր ոգու հառաչ-հրճուանքի վերջին հնչիւնները։

Մեծ օձը խայթեց։

Բոց ու անաստեղ էր նորա սիրտը, պապա-կած էր. եւ արտատեւեց։

Բայց այդ ըրպէին կայծակեց շանթուած մտայլ ամպերը սարսափելով փախան ու կաթնա-գոյն մշուշի միջից, որպէս արեւի յուսատու նետ երեւեց շղարշային մի մանկական զէմք ու երգեց.

«Բարձրացի՛ր, դու մեծ ոգի, բարձրն է գա-
զաթը՝ նպատակը՝ տիեզերքը չէ՛ կարող քեզ
դունչ տալ, քեզ կիանք տալ. սէրը քաղցր է .
բայց սէր չկայ անծայր ու խաւար անհու-
նութեան ծովում . . .»

«Գիտակցութի՛ւն, գիտակցութի՛ւն . . .»
Ժպտաց ոգին. սեւ թեւերով սեւ ամպերը
թափառարեց. թախիծը ամպերի հետ արհիճ
շտառւ. ցած իջաւ.

Եւ հեռացաւ տոկուն ոգին ժանտ ամպերից .
Եւ սլացաւ երգ երգելով, մի երգ ուրախ, քըր-
քըրուն :

Բ .

. . . Եւ ահա նրան աչքը շլացրեց մի մեծ
լուսի սուր նետերը :

Մի գազաթ էր :
Տեսաւ ոգին մի խումբ մուսա՝ յոխորտ խը-
րտիւ . գոլշալ գուարթի. տեսաւ նրանց՝ շո-
ղուն շեղդ պասկներով ու հազուստով պա-
րում էին, երգում էին՝ երգն էր վճիռ ու ան-
հոգ . երգում էին ու երգ ձօնում գեղեցիկու-
թեան աստուածներին . ցայտուն ծպխըր ա-
նոգ ուրախ, քնքուշ թեւով հով էր անում, զով
բերում Ապոլոնի քուրծներին :

Գեղեցիկութեան մուսաների սիրտը խաւարն
է սքողել, եւ որպէս խոցեր, որպէս որդուներ,
շրջում էին ոյրի մուր, անեղբորութեան կը-
մախքները . նրանք սրտում, թախծալի, եր-
գում էին . երգն էր թախուկ ու տրտում. դա մի
քերթող, կեղծ նուագ էր, մայր բնութեան խոր
երգովն ու ոգին :

Եւ բարձունքների մեծ «ես-երը» լուսով
սքողում, չէին տեսնում ժանտ ու մտայլ
տիեզերքի խոցերին, չէին լսում իրանց սրտի
քեծծող երգին :

Չուարթ երգը, շողուն լոյսը, գեղեցիկ էր .
Եւ կախարհեց որոնողին, Դարձրեց հայ-
եացքը գազաթնակէտի խոց սրտից . տեն-
գոտ, նետուեց մուսաների շողուն գերիկը .
երգեց իր երգը :

Անցան օրեր . ձանձրալի էր այդ օրերը :
Աննպատակ ու անխնայ, ինչպէս կոյր բու,
թագաւորի՛ւ անեղբորութեան տաճարի բեկուած
մեղած բեկորներին . երգել, հնչել սգոտ մի
երգ, մա՛հ գուշակել տիեզերքին . . . նա չէր
ուզում սուգ տարածող բու գառնալ, օ՛, չէ՛ր
կարող . կոյր չէր ոգին :

Եւ տխուր էր այդ մեծութիւնը . փոքրիկու-
թի՛ւն այդ մեծութիւնը, Ոգին կ'ուզէր բարձր
եթերէից թագաւորի գիտակցութեան անեղ-
բութեան, եւ ճանաչել գիտակցել . . .

Սե կատարած թափառարեց իր թեւերը, եւ
սլացաւ այդ երջանիկ ու ապարդի մուսաների
վերելից :

Գաղղած ու տենդոտ, նա գնում էր արձա-
կելու տիեզերքի քար հանգոյցը :

Տեսաւ. ահա՛ լայն տարածութիւն : Անազին
խոժանիք խումբ խումբ բաժնուած, անհամ-
բեր, հետեւում էին երկու վիշապների կատա-
ղի կողուն :

— Դրանք կայանդողդ երկու մեծ ուժեր,
Բարին ու Չարն են :

Մօտեցաւ ոգին՝ յուսահատ կռող վիշապնե-
րի շուրջը հաւաքուած խումբ խոժմբ ամբո-
խին :

— Ինչո՞ւ են կռում :

— Չարն ու Բարին կռում են իրանց բը-
նապատելութեան մեծ գահին համար . այսօր է
վախճանը :

— Ո՛րն է սրանցից բարութեան վիշապը,
Մ.թոխը ցոյց տուեց սպիտակ վիշապին :
Մօտեցաւ ոգին միւս մեծ խմբին .

— Ո՛րն է սրանցից բարութեան վիշապը,
Մ.թոխը ցոյց տուեց սեւ վիշապին :

Եւ ոգին լսեց ամբոխի երգը, եւ դառն ծի-
ծաղեց :

Բարձրութեան վրայ՝ անտարբեր, կռիւ ելքին
սպասում էին, խոժոռ ու մոռալ, նոր հաւատի
նոր մարգարէներ : Մօտեցաւ նրանց որոնող
ոգին :

— Իսկ ձե՛ք բարութիւնը :

— Մեր բարութիւնը Ուժն է . երկու վիշա-
պից որը որ յաղթեց, նա մեր աստուածներից
մինն է :

Չարմացաւ ոգին . տեսաւ մի տաճար, որտեղ
բազում էին՝ անգղութ ու ժահրոտ՝ երկրի մեծ
չարութիւնները :

— Մենք պաշտում ենք այն ինչ որ մեծ է
ու գեղեցիկ . իսկ գեղեցիկ ու մեծ է ինչ որ
Ուժ է :

«Մենք ուժ ենք պաշտում, դա է սրբութիւն :
Ոգին չհերքեց . չէր կարող հերքել . Ուղեց
ինքը գտնել աւելի մեծ ուժ, որ կարողանար
բաժանել անհայտ ախոյեաններին . . . չգտաւ .
պէտք էր խոնարհուել մեծ ուժերի առաջ :

Բայց նա չէր սիրում խոնարհուել . ազա-
տութիւն էր սիրում ոգին :

Եւ հեռացաւ՝ դառնացած, հպարտ :

Գ .

Մերիկը խօլ ամպերի գէմ էր կանչել, շե-
րի՛ք էր, որքոն չարախառն ամպերը շղթայել
էին գիտութեան սահմանը :

Կառողած մորիկը հազար թեւերով, ամպերի
գնդերը ցան ու ցրել անում, չէր թողնում
նրանց ուժերը հաւաքուած, կայծակով վարնել
կործանել յանդուգն հսկային, որին ինքը սի-
րով պրկել, տանում էր վե՛ր, ցեպ խորհրդաւոր
քար-հանգոյցը :

Խաւար ու ճնշիչ էր այն սահմանը, որից
անցնում էր, փոթորկի թեւերու վրայ, գե-
տուութեան ոգին :

Յանկարծ տեսաւ նա, խաւարի մէջ՝ պաղպաղող աչքեր ու մեծ գլուխներ :

Հաղարներ էին :

Նրանք տենդոտ փայլուն դէմքով կամենում էին գրաւել որմնող ոգուն, տալով նոր զաւա-
նանքներ անեղորոթեան էութեան մասին :

Լսեց նա նոցա, հասկացաւ բոլորը, ու չհաս-
կացաւ : Բայց պատահաւ էր, ստակլի կուր, հսկաների մէջ...

Նւրնկնելով խորտակւում էին տիեզերքի կե-
ղեւի վրայ : Նրանց ողորկ ու փայլուն փռչին
կուտակւում ու կուտակւում էր :

Իսկ այդ ամէնը ձանձրալի ու ճնշիչ էին : Եւ
զրանք նպատակ չէին կարող լինիլ :

Յուսանալով, անորոշ դանդաղ, նա բարձրա-
նում էր... է՛լ ո՛ւր բարձրանար...

Սխուէթները տենդոտ հրաւէրները նուազում
էին, և շատ թոյլ, թալուկ էր նրանց աղ-
մուկը այդ խորհրդաւոր խաւարի մէջ :

Տարեքերի կուրը զաղարեց. միայն լռութիւնն
ու խաւարն էին հասել այդ բարձրութեանը :

Եւ չէր երևում ոչ մի լոյս ու յոյս : Մեն-
մենակ էր նա անհունութեան մէջ : Պարսպ
չկար : Գո՛ւ չէր ոգին : Ու՛ժ չէր ոգին...

«Այս է ա՜նա կատարը, գո՛ւ եւ նպատակը,
հատկեա՛ս, գո՛ւ եղիր» : Լսեց մի հեռաւոր շշուշ :
Մի բողբ ինքնիշխան մոռացած ոգին եւ արձա-
կած կարծեց քար հանգուցը...

Բայց չէ՛ որ գո՛ւ չէր... կասկածեց :

—Ան նպատակաւ չէ՛, ես չե՛մ կատարը», գոչեց
նա յուսահատ կատաղութեամբ : Թէեւ շուրջ
խաւար, ու եւ չե՛ր տեսնում. բայց զգում եմ
որ կան շատ ճանապարհներ գնալու տեղ կայ :
«Ասա՛ ինձ, ո՛վ անյայտ ու ցուրտ Ոգի, ո՛ւր է
տանում այս խաւար ու ցուրտ ոգին...»

Լռութիւնը միայն եղաւ պատասխանը :
Եւ արտասուեց նա, և արտասուքը թոյն
ու բոց էր :

...

Ոգին բռնեց իր վերջին նեղուկը. նա կա-
մենում էր լինել երկրի գերեզ, յետնալեց, և
է՛նչ տեսներ... Բարձրացած բոլոր տարածու-
թիւնը այժմ սեղմել էր շար մէջը... Ճաշ ու
գին, կողքերեց իր նեղուկը եւ գանակիւժեց սոս-
կալի բարձրութիւնից... բայց ոչ զէպ ի երկրի
այլ գէպ է մի խուր, խաւար, խորովկանի ծո-
ցը : Մեռաւ. նա, —տիեզերքը անծնկնով :

Թիֆլիս

ՎԱՀԱՆ ՍՈՒՐԵՆՅԱՆՏ



«ՄԱՆՈՒԹԵԱՆ-ՇԱՀԻՆ» ԵՐԵՎԱՆԻԸ

—o—

Ի պատիւ Մանուէլեանի եւ Շահինի կաղ-
մակերպուած երեկոյթը տեղի ունեցաւ յունիս
19ի իրիկունը, ջաֆէ Վորթէմէյի ճառարն թը
հողի մասնակցեցան ճաչկերոյթին, որոնց
մէջ կային Հայութեան ամէն դասակարգները
ներկայացնող անձնաւորութիւններ, թրքաւայ
գրագէտներէն՝ Պ. Պ. Լեւոն Բաշալեան եւ Նրու-
անդ Օտեան, օտաւայ մտաւորականութիւնէն՝
Պ. Պ. Միլիք-Կարադէօքեան, Ռ. Բէրբէրեան եւ
Տր. Չալեան, Հայաստանէն՝ ընդ Մոկացի մը,
մեր «Լօյտան» աշխատակիցը, Բարիկ հայ
գաղթականութեան ծախթ ղէմքերէն՝ Պ. Պ.
Տր. Փօլօլեան, Մ. Միւրղատեանց, ու մէկ
քանի ուսանողներ :

Պ. Յ. Իսքէնտէր, Նախագահ Բարիկի Հայոց
Հայրենասիրական Միութեան, հիւանդութենէ
մը արգելուելով՝ չէր կրցած ներկայ գտնուիլ
ճաչկերոյթին, և իր շնորհաւորութիւնները
ղրկած էր սիրուն նամակով մը :

Պ. Յովհաննէս Շահնազար, մեր ողբացեալ ու
անմոռանալի «Հայրենիք»ին տնօրէնը, Ման-
չէսթերէն զրկած էր թելադրական ու աղնու-
դի նամակ մը որուն ընթերցումը բուն ծա-
փերով ընդհանուեցաւ եւ զորամբողջութեամբ
կը հրատարակենք ատորեւ :

Շնորհաւորական նամակներ զրկած էին նը-
մանապէս, Բարիզէն՝ Պ. Պ. Գէորգ Բաշինջապ-
եանց, Վ. Մեարտպեան, Արամ Թաթմեան, Պ. եւ
Ս. Քերտթեան, Վ. Պէքեարեան, Եւն, Լիէփէն՝
Պ. Յ. Գաւնակերեան, Պրիսէլէն՝ Պ. Մ. Թէլեան,
Բատուայէն՝ չորս ուսանողներ :

Մանչէսթրի հայ գաղթականութիւնը շնոր-
հաւորական հեռագիր մը զրկած էր Մանուէլ-
եանին եւ Շահինին. նմանապէս Վառնայէն՝
Պ. Յ. Փափագեան, և «Շաւիղ»ի խմբագրու-
թիւնը :

Երեկոյթը որ սկսաւ ժամը 7ին եւ մինչեւ կէս
գիշերէն յետոյ ժամը 2 տեւեց, անցաւ անընդ-
հատական ու ամենաջերմ ոգեւորութեան մը
մէջ որ կը ըլկէր բոլոր ներկաները համակող
եղբայրական համերախոսութեան մը ու աշխիւ
ուրախութեան մը տիրապետումով :

Աղանդերի պահուն, մէկ քանի բաժակաճա-
ւոր արտասանուեցան «Անահիտ»ի տնօրէնը,
որ կը նախագահէր երեկոյթին, բացառեց
Մանուէլեանի եւ Շահինի կատարած գործին
նշանակութիւնը, նախ իր ներքին մտաւո-
րական զուտ արժանիքին տեսակէտով, յետոյ
այն փայլին տեսակէտով զոր այդ գործը կը բերէ
հայ ցեղին բարոյական վարկին :